ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6, Հեռ. (0222) 57070 ,
ptghni.kotayq@mta.gov.am

N 326
25 սեպտեմբեր 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների, Ձեզ է ուղարկվում Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի N 100-112 որոշումները:
Առդիր 13 ֆայլ:

25-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 100

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ 550.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 225.2 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Էմմա Եղիշի Մարկոսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել ժառանգության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 38 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0217-0038) 1977-1991 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի տունը, աստիճանը, լողավազանը, ծածկը, աստիճանահարթակը, պարիսպը և ժառանգության իրավունքով իրեն պատկանող 550.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 225.2 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Էմմա Եղիշի Մարկոսյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 38 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1977-1991 թվականներին ինքնակամ կառուցվել է 321.0 քմ մակերեսով բնակելի տուն, 0.63 քմ մակերեսով աստիճան, 14.34 քմ մակերեսով լողավազան, 10.50 քմ մակերեսով ծածկ, 6.36 քմ մակերեսով աստիճանահարթակ, 5.35 քմ մակերեսով պարիսպ և ժառանգության իրավունքով իրեն պատկանող 550.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 225.2 քմ մակերեսով հողամաս:
Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը, Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 57 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էմմա Եղիշի Մարկոսյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 38 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 225.2 քմ տարածքը ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝

որոշում եմ.

1. Քաղաքացի Էմմա Եղիշի Մարկոսյանին ժառանգության իրավունքով պատկանող 321.0 քմ մակերեսով բնակելի տունը, 0.63 քմ մակերեսով աստիճանը, 14.34 քմ մակերեսով լողավազանը, 10.50 քմ մակերեսով ծածկը, 6.36 քմ մակերեսով աստիճանահարթակը և 5.35 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Էմմա Եղիշի Մարկոսյանին ժառանգության իրավունքով պատկանող 550.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 110.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 115.2 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 156350 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացի Էմմա Եղիշի Մարկոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

14-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 14
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 101

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 32 որոշումը և քաղաքացի Վիոլետա Յուրիի Գաբրիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Վիոլետա Յուրիի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0177 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 10062019-07-0059) 0.4047 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի և վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, անասնապահական տնտեսություն կառուցելու համար:
2. Վիոլետա Յուրիի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0315-0177 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ անասնապահական տնտեսության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար::
3. Վիոլետա Յուրիի Գաբրիելյանին պատկանող 07-054-0315-0177 ծածկագրով 0.4047 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց թիվ 5/2:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ

Ռուբեն Ստամբոլցյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

16-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 16
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 102

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ 525.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 183.8 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վիգեն Ենգիբարի Ադամյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 40 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 525.0 քմ մակերեսով հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 183.8 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագծի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Վիգեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող 525.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 183.8 քմ մակերեսով հողամաս: Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագիծը, Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 31 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վիգեն ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 40 հասցեի բնակավայրերի նշանակության 525.0 քմ մակերեսով հողամասին կից 183.8 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝

որոշում եմ.

1. Քաղաքացի Վիգեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 40 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0222-0040) բնակավայրերի նշանակության 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 105.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության

իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 78.8 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 107000 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացի Վիգեն Ենգիբարի Ադամյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

17-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 17
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 103

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ 525.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 109.2 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Զավեն Ենգիբարի Ադամյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 41 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 525.0 քմ մակերեսով հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 109.2 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագծի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Զավեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող 525.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 109.2 քմ մակերեսով հողամաս: Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագիծը, Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 31 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զավեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 41 հասցեի բնակավայրերի նշանակության 525.0 քմ մակերեսով հողամասին կից 109.2 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝

որոշում եմ.

1.Քաղաքացի Զավեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 41 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0222-0041) բնակավայրերի նշանակության 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 105.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության

իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 4.2 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 5800 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացի Զավեն Ենգիբարի Ադամյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

17-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. սեպտեմբերի 17
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 104

ՄԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Մաինե Մինասի Առաքելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Մարինե Մինասի Առաքելյանին իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-054-0326-0010 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա կատարել հողային բարեկարգման և բարելավման, մասնավորապես հողահարթեցման և քարհավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 18
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 105

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արթուր Լյովայի Աֆրիկյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել իրեն, Ջեմմա Հակոբի Հակոբյանին և Աիդա, Լուսինե Լյովայի Աֆրիկյաններին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 21 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0222-0030) 1997 թվականին ինքնակամ կառուցված այգետնակը և ջրավազանը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Ջեմմա Հակոբի Հակոբյանին և Արթուր, Աիդա, Լուսինե Լյովայի Աֆրիկյաններին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 21 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1997 թվականին ինքնակամ կառուցվել է 228.13 քմ մակերեսով այգետնակ և 14.77 քմ մակերեսով ջրավազան:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջեմմա Հակոբի Հակոբյանին և Արթուր, Աիդա, Լուսինե Լյովայի Աֆրիկյաններին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 21 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացիներ Ջեմմա Հակոբի Հակոբյանին և Արթուր, Աիդա, Լուսինե Լյովայի

Աֆրիկյաններին ժառանգության իրավունքով պատկանող 1997 թվականին կառուցված 228.13 քմ մակերեսով այգետնակը և 14.77 քմ մակերեսով ջրավազանը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 18
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 106

ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՐԻՍՊԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման N 4 հավելվածի պահանջների, հիմք ընդունելով Անահիտ Հրաչիկի Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Անահիտ Հրաչիկի Ավետիսյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 3-րդ թաղամաս թիվ 13 հասցեի (սեփականության վկայական N 24072020-07-0195, ծածկագիր 07-054-0206-0022) և Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 3-րդ թաղամաս թիվ 14 հասցեի (սեփականության վկայական N 24072020-07-0201, ծածկագիր 07-054-0206-0023) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերում առանց շինարարության թույլտվության կատարել պարսպապատման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

23-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 23
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 107

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 32 որոշումը և քաղաքացի Վաղինակ Ռազմիկի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Վաղինակ Ռազմիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0186 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 17082020-07-0071) 0.09979 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն՝ սառնարան և պարիսպ կառուցելու համար:
2. Վաղինակ Ռազմիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0315-0186 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսության, սառնարանի և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար::
3. Վաղինակ Ռազմիկի Հարությունյանին պատկանող 07-054-0315-0186 ծածկագրով 0.09979 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 4/3:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ Ռուբեն Ստամբոլցյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

23-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 23
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 108

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԵԼԵԳԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Ալեքսանդր Սերգեյի Շելեգայի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ալեքսանդր Սերգեյի Շելեգային տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 21-րդ փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի թիվ 8 (կադաստրային ծածկագիր 07-054-0318-0066, սեփականության վկայական N 07082020-07-0100) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան կառուցման և տարածքի պարսպապատման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Ալեքսանդր Սերգեյի Շելեգային շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 24
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 109

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 32 որոշումը և քաղաքացի Վաչագան Սոսի Վարդանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Վաչագան Սոսի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0331-0035 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 26082020-07-0094) 1.1615 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
2. Վաչագան Սոսի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Պտղնի համայնքում գտնվող 07-054-0331-0035 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ջերմոցային տնտեսության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար::
3. Վաչագան Սոսի Վարդանյանին պատկանող 07-054-0331-0035 ծածկագրով 1.1615 հա գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գ. Պտղնի 22-րդ փողոց թիվ 2/1:
4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Պտղնի համայնքի ղեկավարի տեղակալ Ռուբեն Ստամբոլցյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. սեպտեմբերի 24
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 110

ՋԱՆԻԲԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Ջանիբեկ Վլադիկի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ջանիբեկ Վլադիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 5-րդ թաղամաս թիվ 72 հասցեում գտնվող 07-054-0204-0006 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ մեկ հարկանի բնակելի տան և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 25
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 111

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 33 որոշումը, կից սեփականատիրոջ դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր աճուրդային կարգով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Պտղնի համայնքում գտնվող 0.091289 հա (սեփականության վկայական N 15072020-07-0085, ծածկագիր 07-054-0310-0037) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարել կից հողամասի (կադաստրային ծածկագիր 07-054-0308-0089) սեփականատեր Աշոտ Առաքելի Վիրաբյանին (անձնագիր AS0538036, տրված 25.02.2019թ., 019-ից) 7000 ՀՀ դրամով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 25
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 112

ՀԵՂԻՆԵ ՋԶՄԱՉՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Հեղինե Ռուբենի Ջզմաչյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Հեղինե Ռուբենի Ջզմաչյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 18-րդ տեղամաս թիվ 11 (կադաստրային ծածկագիր 07-054-0140-0011, սեփականության վկայական N 11082020-07-0013) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում երկհարկանի բնակելի տան, ծածկոցի (ավտոկայանատեղի), շվաքարանի և բաց լողավազանի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Հեղինե Ռուբենի Ջզմաչյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25-Sep-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 25
գ.Պտղնի